

Թիւ 26296  
Մարտ 2, 1979

Արժանաշնորհ

Տ. Գէորգ Քնյ. Առաքելեան  
Հովհան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Նախազան Օխական Խորհուրդի  
Պինկհամթըն.

Սիրելի Տէր Գէորգ,

Ս Առաջած ենք Փետրուար 26, 1979 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք  
թէ ձեր Նախազանութեամբ Յունուար 28ին գումարուած համայնքիղ օխական ժողովին  
մէջ կատարուած է ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայաց-  
նելով բուէարկութեան արդիւնքը կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշ-  
տօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք օխական Խորհուրդի Խորընքիր անդամները, ըստ  
ստորեւ տրուցծ ցանկին:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ համաձայն Թեմական Կանոնադրու-  
թեան թիւ 21րդ յօդուածի տրամադրութեան՝՝ օխական Խորհուրդի, Հաշուերննինչ եւ  
Ընտրողական Յանձնախումբերու, Թեմական Պատգամաւորներու եւ ծխական ժողովի  
ղիւանի ընտրութիւնները կը կատարուին զաղանի բուէարկութեամբ՝՝ օխական ժո-  
ղովները պէտք է գումարուին համաձայն Թեմական Կանոնադրութեան տրամադրութեանց:

Համեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի Խորընտիր Դիւանի  
անդամոց անունները, հասցէնները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի Խոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնա-  
կիցներու յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս.  
Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիղ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՎՈՒ

Առաջնորդ

Տիրան Գրանեան  
Յակոբ Խնճէթիկեան  
Տոքթ. Արիստակէս Խաչատուրեան

**Թիւ 26466  
Օգոստոս 2, 1979**

**Արժանաշնորհ**

**Տ. Գէորգ Քնեյ. Առաքելեան  
Հովհան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկհամթըն.**

**Սիրելի Տէր Գէորգ,**

**Առաջած ենք Ցուլիս 19, 1979 թուակիր ձեր նամակը:**

**Այսու գիրով կը հաստատենք որ 1980, Դեկտեմբեր 7ի  
շարաթավերջը վերապահած ենք Պինկհամթընի Ս. Գրիգոր  
Լուսաւորիչ Եկեղեցւոյ մեր համայնքի այցելութեան:**

**Սիրոյ ողջունիւ**

**ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՄԱԿՈՎՈՒ  
Առաջնորդ**

Թիւ 26833  
Ապրիլ 17, 1980

**Մածայարգ**

Տորթ. Շորճ Ռէնէպեան  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ակեղեցւոյ  
ծխական Խորհուրդի Առենապետ  
Պինկ համբըն.

Ցարգելի Տորթ. Ռէնէպեան,

Մարտ 81ին առացանք համայնքի Յունուար 29 սեղեկագիրը, որով կը հաղորդուի  
թէ Արժշ. Տ. Գէորգ Էնյ. Առարելեանի նախազանութեամբ Յունուար 27ին գու-  
մարուած ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս անդամոց  
ընտրութիւնը, եւ Ներկայացուելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրուի  
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ  
ստորեւ արուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի  
անդամոց անունները, հասցէնները եւ հոռածայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր  
գործունէութեան աարի մը, ի պայծառութիւն Ս. Ակեղեցւոյդ եւ ի հոգեւոր  
շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

**Սիրոյ ողջունիւ**

**ԹՈՐԴՈՒՄ ԱՐՁԱԳԻՍԱԿՈՂՈՍ  
Առաջնորդ**

Շորճ Ռէնէպեան  
Հրայր Տէօրմէ Ծեան  
Ճան Պաղասարեան  
Նշան Քէնյեան

Թիւ 26849  
Ապրիլ 29, 1980

Հոգեշնորհ  
Տ. Սուրեն Արդ. Զինչինեան  
Հովհան Ս. Շողակաթ Եկեղեցւոյ  
ԳԵՂԱՎԻԼ.

Սիրելի Հայր Սուրեն,

Այսու գիրով կը տեղեկացնեմ թէ Կարգադրած ենք որ դուք ըստանձնեք Պինկիամթըն նիւ Խորքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովուութիւնը:

Կիրակի Մայիս 11ին ՊԵՂԱՎԻԼի Ս. Շողակաթ Եկեղեցւոյ մէջ ձեր հրաժեշտի Ս. Պատրիարք մատուցանելէ եաք, Մայիս 15ին կրնաք մեկնիլ Պինկիամթըն:

Այս կարգադրութեան մասին տեղեկացուցած ենք ՊԵՂԱՎԻԼի մեր համայնքի ծխական Խորհուրդին՝ ձեր անունին ուղղուած մեր նամակով:

Համեցեք ձեր վերջնական կարգադրութեանց մասին տեղեկացնել մեզիւ:

Ձեզի կը ցանկանք առաւել բաջառողջութիւն եւ ձեզի վստահուելիք նոր պարտականութիւններու իրազործման մէջ յանդութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՅՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Թիւ 26950  
Ցուլիս 21, 1980

Հոգեշնորհ

Տ. Սուրեն Արզ. Զինջինեան  
Հովհան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ակեղեցւոյ  
Նախագահ ծխական Խորհուրդի  
Պինկհամբըն.

Սիրելի Հայր Սուրեն,

Խնչպէս մեր հետաձայնային խօսակցութեան ցննացքին մեզի հա-  
ղորդեցինք՝ հակառակ անոր որ մեր ժամանութեանց տեսքակին մէ?՝  
Դեկտեմբեր 7ի շաբաթավերջը ցերապահածէէինք Պինկհամբընի մեր  
համայնքին այցելութեան, ներկայիս տակայն արուած ըլլալով որ  
մեզի համար կարելի պիտի լԵԼԼայ այդ այցելութիւնը կատարել,  
առ այժմ կը յետաձգենք յիշեալ այցելքիւնը:

Տեզի մաղթելով բաֆառողջութիւն եւ յաջողութիւն,

Սիրոյ ողջունիւ

ՊՈՂՋԱՇ ԱՐՁԵՎԻՍԿՈՉՈՎ  
Առաջնորդ

Թիւ 27278  
Ապրիլ 16, 1981

Հոգեշնորհ

Տ. Սուրէն Վրդ. Չինչինեան  
Հովհան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ակեղեցւոյ  
Նախագահ Ժիական Խորհուրդի  
Պինկհամթըն.

Միբելի Հայր Սուրէն,

Առաջած ենք Ապրիլ 5, 1981 թուակիր մեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ նոյն օրը զումարուած համայնքիո Մասնաւոր Ժիական ժողովին մէջ, զաղանի բուէարկութեամբ, կատարուած է Ժիական Խորհուրդի երեք անդամներու ընարութիւնը:

Այսու գիրով կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի նորընաիր անդամները, բայ սառեւ արուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիական Խորհուրդի նորընաիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, մեզի եւ մեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր զործունէութեան առի մը, ի պայծառութիւն Ս. Ակեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիո մեր սիրեցաւ ժողովուրդին:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐՃՈՒՄ ԱՐՔԵՊԻԿԱԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Տիրան Գրանեան  
Գէորգ Շափազեան  
Հէրի Ասրգիսեան

Թիւ 27394  
Ցուցիս 7, 1981

Սեծայարգ  
Տէր եւ Տիկին Գեղամ եւ Հայկուհի Գրասեան  
Պինկհամթըն.

Յարգելի Տէր եւ Տիկին Գրասեան,

ԱՌ Փափաքինք մեր խորին շնորհակալութիւնք յայտնել ձեզի՝ Պինկհամթըն  
մեր վերջին այցելութեան ընթացքին մեզի հանդէպ ձեր ցոյց առւած չերմ հիւ-  
րասիրութեան եւ ընդունելութեան համար:

Պինկհամթընի մեր համայնքը, հակառակ անոր որ մեր ընդարձակ թեմի փոր-  
րիկ ծուկներէն մէկն է, շնորհիւ ձեզի նման հաւատաւոր եւ եկեղեցասէր ազ-  
գայիններու մացած է կանգուն՝ հոգալով շրջանի մեր հաւատացեալներուն  
հոգեւոր կարիքները: Ուր որ կան նուիրեալ ազգայիններ՝ այնուղի կան հա-  
մայնքային կեանք եւ աշխուժութիւն: Մենք ուրաք ենք որ Պինկհամթընի մեր  
համայնքին մէջ կը շարունակուին ազգային-եկեղեցական կեանքն ու աշխու-  
ժութիւնը:

Հետաքրքիր ենք գիտնալու թէ ձեր վիրաւոր ծիուն առողջական վիճակը  
ինչպէ՞ս է: Անոր հանդէպ ձեր ցուցաբերած սէրը, զուրգուրանքն ու ինամ-  
բը մեծապէս ապաւորեցին մեզ:

Ե'աղօթենք որ Տէրը նր հովանին անպակաս ընէ ձեր ընտանեկան յարկին  
վրայէն եւ նր օրհնութիւններով զարդարէ ձեր եւ ձեր հարազաներու կեան-  
քի օրերը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՅԱՆ ԱՐՔԵԳԻՍԿՈՎՈՒ  
Առաջնորդ

Թիւ 27789  
Ապրիլ 80, 1982

Հոգենորհ

Տ. Սուրեն Վրդ. Զինչինեան  
Անձմեայ Հովիւ  
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ակեղեցւոյ  
Վիսկնամբըն.

Սիրելի Հայր Առքէն,

Այսօր, Ապրիլ 80, ստացանք աեղեկազիրների համայնքիդ ծխական ժամա-  
փն, որ գումարուած է Ժնարուար 7, 1982ին:

Այսու զիրավ կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընարդի անդամնե-  
րը, բայ ասորեւ արուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընարդը  
ովհանի անդամոց անունները, հասցէնները եւ հեռածայնի թիւնը:

Կ'օր հնենք ծխական Խորհուրդի նոր կողմը եւ ձեզի ու ձեր պաշտամակից-  
ներուն կը մաղթենք յաշող եւ արդիւնաւոր գործունէութեան արի մը՝ ի  
պայծառաւթիւն Ս. Ակեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր  
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիք.

ԹՈՐԳՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՎ  
Առաջնորդ

Տոք. ճարմ Ռէնէպեան  
Տոք. Արիստակէւս Խաչատրեան  
Տիար ճան Պոկառութեան



# ԱՐՄԵՆՈՂԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 27965  
Նոյեմբեր 15, 1982

Հոգեշնորհ

Տ. Սուրէն Վրդ. Զինչինեան

Հովիտ Ա. Գրիգոր Լուսաւորիչ Ծկնդցւոյ

Նախագահ Ժիրական Խորհուրդի

Պինկ համթըն

Սիրելի Հայր Սուրէն,

Այսու զիրով կը յայտնենք թէ համայնքիդ պատգամաւորներուն պաշտօնավարութեան շրջանը լրացած է, եւ պէտք է ընտրութիւն կատարէք նոր պատգամաւորներուն եւ անոնց անձնափոխանորդներուն համար, թեմական կանոնադրութեան 14-դ եւ 54 յօդուածներուն համաձայն, եւ 1981 տարուան համայնքիդ տեղեկագրին մէջ արձանագրուած տրատու անդամներու թիւին հիման վրայ:

Կը յանձնարարենք որ ծեր նորընտիր պատգամաւորներուն անունները եւ հասցէնները Առաջնորդարան ղրկէք ամենէն ուշը մինչեւ Փետրուար 15, 1983, որպէս զի կարելի ըլլայ հրաւիրել զիրենք թեմական Պատգամաւորական ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 5-7, 1983, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը՝ հիւրընկալութեամբ Փէյլըս Հայթց հլլինոյի Ս. Յովակիմ եւ Աննա Հայց. Եկեղեցւոյ:

Կը թելադրենք որ նորընտիր իւրաքանչիւր պատգամաւորի ինքնութիւնը հաստատող վկայագիրը Հոգեւոր Հովիւին, ծխական Խորհուրդի Ատենապետին եւ Ատենապիրին կողմէ ստորագրուած՝ Առաջնորդարան ղրկէք համայնքիդ Անդամական ժողովի տեղեկագիրներուն հետ:

Կը ներփակենք Առաջնորդարան ղրկուելիք վկայագրին Հայերէն եւ Անգլերէն լեզուներով օրինակը՝ որպէս նմոյշ:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՁԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Թիւ 28162  
Ապրիլ 14, 1988

Հոգեշնորհ  
Տ. Սուրեն Վրդ. Զինշինեան  
Հովհան Ս. Գրիգոր Լուսաւորիչ օկեղեցւոյ  
Պինկ համթըն.

Սիրելի Հայր Սուրեն,

Ստացած ենք Մարտ 22, 1988 թուակիր ծեր Նամակը, որով խնդրանք կը  
ներկայացնէք անդամակցելու մեր թեմի հոգեւորականաց դատուն:

Թեմական Խոր հուրդը իր վերջին նիստին մէջ նկատի առաւ ծեր Խընդ-  
րազիրը եւ որոշեց ընթացք առ մեր խնդրանքին:

Ուրաք ենք ծեզի աեղեկացնելու որ 1988 Ապրիլ 15էն սկսեալ դուք  
անդամ կը նկատուիր Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան թեմի հոգեւորա-  
կանաց դատուն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐՉՈՄ ԱՐԵՍԳԻՍԿՈՊՈՒ  
Առաջնորդ

Թիւ 28217  
Մայիս 24, 1988

Հոգեշնորհ

Տ. Սուլբէն Վրդ. Զինշինեան  
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկնամթըն.

Միրելի Հայր Սուլբէն,

Երեկ ստացած համայնքիդ ծխական ժաղովի աեղեկագիրները: ծխական  
ժաղովը աեղի ունեցած է մեր նախագահութեամբ Փետրուար 6, 1988ին:

Այսու զիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր ան-  
դամները, ըստ առուած արուած ցանկին:

Հանեցէք փութով Առաջնորդապան ղրկել ծխական Խորհուրդի նորըն-  
տիր ղիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռածայնի թիւները:

Կ'օրհնենք ծխական Խորհուրդի նոր կազմը եւ յաշող ու արդիւնա-  
ւոր գործունէութեան առի մը կը մաղթենք:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐՉՈՄ ԱՐՁԵՎԻՍԿՈՊՈՒ  
Առաջնորդ

Տիրան Գրամեան  
Յակով Խնճանիկեան



# ԱՌԱՋՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Թիւ 29910  
Օգոստոս 19, 1986

Հոգեցնորհ  
Տ. Սուրէն Վրդ. Զինչինեան  
Հովհաննեան Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ  
Պինկ համթըն.

Միրելի Հայր Սուրէն,

Նկատի առնելով մեր թեմի հոգեւորականներէն ոմանց ինքնակամ արարքները, փոփոխութիւն մտցնելու մեր Եկեղեցւոյ ծիսական եւ կարգապահական սովորոյթներուն եւ աւանդութեանց մէջ, հետեւեալ հրահանգը կը յանձնենք ծեր լուրջ ուշադրութեան:

Կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու աւարտին աշխարհական անձանց քարոզի փոխարէն ``Վկայութիւն տալու`` նորոյթը:

Նաեւ կը հրահանգենք դադրեցնել պաշտամունքներու ընթացքին կին մարդերու մոմակալութեան եւ այլ պաշտօններ տալը, բացի երգեցիկ դասին անդամութենէն եւ Հին Կտակարանի եւ Առաքելոց Թուղթերու ընթերցողութենէն:

Կ' ազդարարենք ծեզ զգուշանալ արարքներէ որոնք կրնան պարտաւորել մեզ կարգապահական ծանր որոշումներ առնելու:

Կը յանձնարարենք որ կարեւորութեամբ նկատի ունենաք վերոյիշեալները, ինչպէս նաեւ նախապէս տրուած հրահանգները, զորս այս կերպով ծեր ուշադրութեան յանձնել պարտաւորեցին մեզ՝ մեր թեմի հոգեւորականներէն ոմանց արարքները: Անոնց անձնապէս եւս զգուշացուցած ենք:

Կ' աղօթենք որ Տէրը իր իմաստութեամբ առաջնորդէ իր սուրբ Եկեղեցւոյ սպասաւորները:

Միրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ